

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՍՅԱԿԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Տալվորիկցիներ, հյուրեր, ավագանի: Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքը հաստատել է իր 2011 թվականի բյուջեն հետևյալ համամասնությամբ:

1. Եկամուտների գծով 14.560.0 հազար դրամ.
2. Ծախսերի գծով 15.567.0 հազար դրամ.
3. Բյուջեի դեֆիցիտ 1007.0 հազար դրամ.

Համայնքի գյուղապետարանը Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 32-45 հոդվածների համաձայն, 2011 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարվել է հետևյալ աշխատանքները՝

1. Շահագործման է հանձնվել փողոցների արտաքին լուսավորման ցանցը:

2. Տալվորիկ համայնքի գյուղապետարանը համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ տեխնիկան և մեխանիզմները վարձակալությամբ վարձույթով տրամադրել է համայնքի բնակիչներին:

3. Տալվորիկ համայնքի գյուղապետարանը համագործակցում է հազարամյակի մարտահրավերներ «Հայաստան» հիմնադրամի հետ: Հազարամյակի մարտահրավերներ «Հայաստան» հիմնադրամը Տալվորիկ համայնքում իր ծրագրով իրականացնում է նոր ոռոգման ջրանցքի կառուցումը, որը հնարավորություն է տալիս ոռոգելու նախկինում չորոզվող շուրջ 300 հա հողատարացք:

4. Տալվորիկ համայնքի գյուղապետարանը 2011 թվականի 1-ին կիսամյակում արձակել է 8 կարգադրություն և ընդունել է 4 որոշում:

5. Տալվորիկ համայնքի ավագանին հրավիրել է 3 հերթական և 5 արտահերթ նիստեր:

6. Կապիտալ վերանորոգման է ենթարկվել համայնքին պատկանող թիվ 1 խմելաջրի խորքային հորի պոմպը և շարժիչը:

7. Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի բնակիչների կողմից ստացվել է 8 դիմում, որը ժամանակին տրվել է պատասխան:

8. 2011 թվականի 1-ին կիսամյակում գյուղատնտեսական տարում հիմնվել է 5 հա խաղողի այգի և 12.8 հա պտղատու այգի:

9. Հողի հարկի գծով ֆինանսական մուտքերը կազմել են 1890.5 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 22.5%-ը, իսկ կիսամյակի պլանավորված եկամուտի դիմաց 45%:

10. Գույքահարկի գծով ֆինանսական մուտքերը կազմել է 107.3 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 39.7 %-ը, իսկ կիսամյակի պլանավորված եկամուտի դիմաց 79.5 %:

11. Հողի վարձի գծով ֆինանսական մուտքեր չկա:

12. Գույքի վարձակալության եկամուտների գծով ֆինանսական մուտքերը կազմել է 256.9 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 28.2 %-ը, իսկ կիսամյակի պլանավորված եկամուտի դիմաց 56.5%:


13. 2011 թվականի 1-ին կիսամյակում գյուղապետարանի ոչ մի աշխատակից չի ենթարկվել աշխատանքային տույժի:

14. Համայնքն ամենօրյա կապ է հաստատում մարզպետարանի, մարզային կառույցների, ՆԳ, դատական ու դատախազական մարմինների կառույցների հետ:

15. Առ 01.07.2011 թվականի դրությամբ համայնքում մշակվել է 1139.7 հեկտար հողատարածք, որը ըստ կուլտուրաների կազմում է .

- Ցորեն - 19.8 հա
- Գարի- 29.6 հա
- Առվույտ - 197.6 հա
- Չաման- 3.7 հա
- Էզիպտացորեն - 41.8 հա
- լոլիկ - 10.5 հա
- Վարունգ - 44.2 հա
- Սոխ - 4.9 հա
- Զմերուկ - 122.8 հա
- Ավել - 16.8 հա
- Արևածաղիկ 60.9 հա
- Պտղատու այգի - 266.9 հա
- Խաղողի այգի - 320.2 հա

16. Առ 01.07.2011 թվականի դրությամբ սոց վճարները, եկամտահարկը և էլեկտրաէներգիայի գումարները ամբողջությամբ վճարված է :

Տավորիկ համյնքի ղեկավար  Կ. Սաղաթեյան

